ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՄԱՁԳԵՍՏ-23/3 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
25	Կիտել տոնական միակոճկուն (միափեղկ) Երրորդ դասի խորհրդականից մինչև առաջին դասի խորհրդականի համար՝ բաց մոխրագույն 67% բուրդ, 33% Պ/Է 317գր/մ2 խտությամբ կտորից, մարմինը կիսագրկող մակերեսով, հետ ծալած օձիքով, օձիքի եզրերը մշակված են 342 գր/մ2 խտությամբ մահուդե կարմիր եզրագծով, օձիքի վրա ոսկեգույն թելով ասեղնագործվում է Հակակոռուպցիոն Կոմիտեում ծառայողի համար նախատեսված եզրազարդի խորհրդանշանը (Ձև 3, Նկար 3): Կիտելի 2 փեշերի վրա ուղղանկյուն կափույրով ներկարված գրպաններ են: Թևքերը երկկարանի են, թիկունքն ամբողջական է՝ երկու կողային բացվածքով: Ձախ թևի ուսակարից 90 մմ ներքև Հակակոռուպցիոն Կոմիտեի ջակարդե թևքանշանն է (Ձև 6, Նկար 3): Աստառը՝ մոխրագույն մետաքսե, ծոցագրպանով: Կիտելը՝ միակոճկուն, միաշարք երեք ոսկեգույն 22մմ տրամագծով հակակոռուպցիոն կոմիտեի խորհրդանիշը ոսկեգույնով երիզված կոճակներով է (Ձև 9, Նկար 1): Համաձայն՝ ՀՀ կառավարության 22.09.2022թ N 1476-Ն որոշման: Տաբատ տոնական՝ մուգ կապույտ 67% բուրդ, 33% Պ/Է 317գր/մ2 խտությամբ կտորից, ուրվագիծը՝ ուղիղ, կողային կարերով անցնում է կարմիր 342 գր/մ2 խտությամբ մահուդե 1 եզրագիծ՝ 1.5-ից 2 մմ լայնությամբ: Գոտին՝ կամրջակներով: Կոճկվում է կոճակով, մետաղյա կեռիկով և շղթայով: Կողային գրպանները թեք են, հետնամասի աջ կողմում՝ կոճակով կոճկվող կափույրով ներկարված գրպան: Առաջամասը՝ մինչև ծնկները մետաքսյա աստառով (Ձև 9, Նկար 1, 2): Համաձայն՝ ՀՀ կառավարության 22.09.2022թ N 1476-Ն որոշման:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՄԱՁԳԵՍ-23/3 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
25	